ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/123

«06» 05. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կրկին ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 37-Ա, 38-Ա և 39-Ա որոշումները :

Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մայիսի 2018 թվականի N37- Ա

06-087-0014-0020 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Լ.Հովակիմյանի դիմումը, ,,Մել և Միլ՞ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1992թ. թիվ 26-32 որոշումը,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը 29.12.2011թ. սեղանամատյան թիվ12909, ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, ՀՀ.օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերով, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին՞ ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով , ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-087-0014-0020 ծածկագրի տակ գտնվող 0,09438 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող ,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1997թ. կառուցված 123,01քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Լուսյա Սերոբի Հովակիմյանի/ծնված 1949թ./ և Շուշանիկ Վանիկի Պապիկյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել,իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լուսյա Սերոբի Հովակիմյանի և Շուշանիկ Վանիկի Պապիկյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ.Շիրակամուտ փողոց թիվ 15, տուն թիվ 46:
6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2018 թվականի N38-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի Կրասնոդարյան փողոցի վրա գտնվող 06-087-0041-0007 կադաստրային ծածկագրով 0,14 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վա գտնվող բնակելի տանը տալ «գ. Շիրակամուտ, փողոց Կրասնոդարյան , տուն թիվ 40 » հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01
Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25» մայիսի 2018 թվականի N39-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-087-0066-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողի սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը

Որոշում եմ

1.Օրենքի ուժով 06-087-0066-0007 ծածկագրի տակ 0,11933 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Լեռնիկ Արզինովի Նալբանդյան սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում , չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
06801655